ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«16» 11 2018 թ.
№ [illegible]

«Բիզնես Թրենդ» ՍՊԸ (ՀՎՀՀ 01263483) տնօրեն
Ն. Միքայելյանին
հասցե՝ ք. Երևան, Բաբաջանյան 95շ. 11բն.
էլ. հասցե՝ businesstrend@inbox.ru

ՀՀ պաշտպանության նախարարության և «Բիզնես Թրենդ» ՍՊԸ-ի միջև 20.09.2018թ. կնքված N ՀԲՄԱՊՁԲ-7/9-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը 2018թ. հոկտեմբեր ամսին Երևանի տարածաշրջանի զորամասեր պետք է մատակարարեր 188 697 կգ կարտոֆիլ, Արմավիրի տարածաշրջանի զորամասեր պետք է մատակարարեր 139 023 կգ կարտոֆիլ, Գեղարքունիքի տարածաշրջանի զորամասեր պետք է մատակարարեր 168 291 կգ կարտոֆիլ, սակայն նոյեմբերի 11-ի դրությամբ մատակարարվել է համապատասխանաբար՝ 77 046, 31 340 և 129 767 կգ կարտոֆիլ:

Հիմք ընդունելով վերոնշյալ պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2018թ. նոյեմբերի 19-ին միակողմանի մասնակի լուծել է ՀԲՄԱՊՁԲ-7/9-1 պայմանագիրը հոկտեմբեր ամսվա ընթացքում մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված 111 651, 107 683 և 38 524 կգ կարտոֆիլի խմբաքանակի մասով:

Տեղեկացնում եմ, որ «Դեագա» ՍՊԸ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 128 511 ՀՀ դրամը որպես տույժ՝ Պայմանագրի 6.2 կետի համաձայն, ինչպես նաև վերոնշյալ ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին ենթակա է գանձման 4 081 200 ՀՀ դրամը որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում (պայմանագրի 1-ին, 3-րդ և 5-րդ չափաբաժինների ընդհանուր գումարի 10 %-ը):

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

0044, Երևան, Բագրևանդի 5, Հեռ.՝ (+374 10) 29 45 45, Ֆաքս՝ (+371 10) 29 46 13, Էլ.փոստ՝ depart@mil.am
Ереван, Багревандa 5, 0044, Тел: (+374 10) 29 45 45, Факс. (+374 10) 29 46 13, Эл.почта: depart@mil.am
0044, 5 Bagrevans Str., Yerevan, Tel. (+374 10) 29 45 45, Fax: (+374 10) 29 46 13, E-mail: depart@mil.am